Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-232[14]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թվականի մարտի 24-ի ՀՕ-147-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 3-րդ կետում «մարված կամ հանված» բառերը փոխարինել «մարված կամ վերացված» բառերով.

2) 5-րդ կետում «չի իրականացվել ոչ արդարացնող» բառերը փոխարինել «չի հարուցվել ոչ ռեաբիլիտացնող» բառերով:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում «ոչ արդարացնող հիմքով» բառերը փոխարինել «ոչ ռեաբիլիտացնող հիմքով» բառերով, «չիրականացնելու» բառը՝ «չհարուցելու» բառով:

Հոդված 3. Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում նրա պաշտոնավարումը կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքների ուժի մեջ մտնելու օրը: